

891.714
8-68


1182

1183

1184

1185

1186



Թիֆլիսի լճի ՀԱՅԵՐԵՆ ԳՐՐԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

№ 14.

4495.

Օրույնական հայոց
ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՄԱՑԻՍԵԱՆ ՏՕՆԸ

ԳԻՆԱԵԱՆԴԻԱՅՈՒՄ

ՎԵՊԻԿՆԵՐ ՄԱՆՐ ԵՐԵԽԱՆՑ ՀԱՄԱՐ

ԹԱՐԴՄԱՆՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ

2004

ԹԻՖԼԻՍ

Տպարան ՄՈՎՅ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵԽ ԸՆԿ.

1882

Թիֆլիսի Ընկ. ՀԱՅԵՐԵՆ ԳՐԲԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

891.715
8-68 № 14.

8-68

ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԵԿ

ՄԱՅԻՍԵԱՆ ՏՕՆԸ

ԳԻՒՂԵԱՆԴԻԱՅՈՒՄ

ՎԵՊԻԿՆԵՐ ՄԱՆՐ ԵՐԵԽԱՆՑ ՀԱՄԱՐ

Հ 0 0 2
6 0 2
Q 2

ԹԱՐԴՄԱ ՆՈՒԹԻՒՆ ՌՈՒՍԵՐԵՆԻՑ



ՅՊԱՐԱՆ ՄՈՎՍ. ՎԱՐԴԱՆԵԱՆՑ ԵԿ ԸՆԿ.

1882

1193

卷之三

ପ୍ରମାଣନ୍ତିକ ପରିପ୍ରେକ୍ଷଣ

八三

2002 JULY 4 8 AM

Дозволено Цензурою, 21 Апрѣля 1882 г. Тифлісь.

ՀԱՅՈՒԹ, ԵՐԵՎԱՆԻ ՊՐԵՄԻ ՊԱՐՏԱԳՈՒՅՆ

ବ୍ୟାକ୍ ପାଇଁ ଏହି କଥା କିମ୍ବା କିମ୍ବା

Тип. М. Вартаняна и К°. противъ Троицкой церкви.

Ապրելու

1779-1800

281

ወኑናተራሬ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

զաւու ին Հայութը նողած. վցարաց պատ
ին չե .նուլը զե մայիսաւուղարք չնկա
ց բայց նորութեան **1.** և նուիս զե մայ
սաւուղարք նուղաւուց պայտաց զայ
Զբկայ ոչ մի անկիւն Ամերիկայի Միացեալ
նահանգներում, ուր այնպէս ուրախութեամբ
տօնում լինէին Քրիստոսի ծնունդը, ինչպէս
փռքրիկ Կինդալէց անունով քաղաքումը, որ
յաւոնի է իւր գործարաններով:

Ծննդեան նախընթաց օրը ամենքը դադարեցան իրանց գործերից. քաղաքում բոլոր խանութները եւ գործարանները փակուցան եւ եթէ մէկը կամենար այդ ժամանակ մի բան գնելու, անշուշտ դատարկ ձեռքերով կը վերադառնար տուն:

Իսկ տների մէջ չէը այնպէս հանդարտ, ինչպէս փողոցներում։ Ամեն խոհանոցներում

ահագին պաշարներ էր դիզուած և ամեն խո-
հարար զբաղուած էր երեկոյեան սեղանի հա-
մար զանազան կերակուրների պատրաստելով:
Տներում հիւրասենեակների վարագոյրները վայր
էին թողած և երեկոյեան թէն պատրաստում
սեղանի վերայ:

Թէ խեղճը և թէ հարուստը, ամենքը ի-
րանց կարողութեան համեմատ պատրաստվում
էին տօնելու այն մեծ տօնը:

Բայց քաղաքի ծայրում գտնուած մի տանը
ոչինչ պատրաստութիւն չէր երևում. ոչ մի
ձայն չէր լսվում եւ խոհանոցում կրակ չը
կար. խորին լուռթիւն էր տիրում այնտեղ:
Միայն երկրորդ յարկի պատուհանից մի խա-
ւար ճրագի լուս էր նշմարվում. իսկ ներքին յար-
կումը բոլորովին մութն էր: Տան շուրջը մի
փոքրիկ պարտէզ կար ձիւնով ծածկուած. լու-
սինը լուսաւորում էր պարտէզը, ուր կանգնած
էին երկու մարդիկ:

— Ինչ գեղեցիկ գիշեր է, ասաց մէկը, որ
հագած ունէր տաք վերարկու եւ ձեռնոցներ:

— Նատ լաւն է, պատասխանեց կանացի ձայ-
նը. միայն շատ ցուրտ է:

Արդարեւ շատ լաւ գիշեր էր: Երկինքը
պարզ էր եւ փայլում աստղերով. ձիւնը խըշ-
խշում էր ոտքերի տակը, եղեամը փայլում

ծառերի վերայ: Բայց կինը մըսում էր և այդ
պատճառով բնութեան գեղեցկութիւնը նրան
չէր գրաւում: Նա շատ թեթև էր հագնուած
և դուրս էր եկել այն պարոնին ճանապարհ
գնելու, մտածելով այժմ քարածուխի թան-
գութեան մասին, որ գործ են ածում Ամերի-
կայում փայտի փոխանակ. և նորա մասին, որ
տանը բոլոր պաշարները համարեա թէ հատել
են և չէ իմանում, թէ ինչպէս սպիտի կա-
ռավարէ իւր հիւանդ ամուսնուն և երեք
որդուն:

— Մնաք բարով, տիկին, ասաց բժիշկը,
գնացէք տուն, չը մըսիք: Ամուսնուդ շատ
գեղեր հարկաւոր չեն. ամեն օր մի մի կտոր
խորոված միս և մէկ բաժակ լաւ գինի և նա
շուտով կառողանայ. մնաք բարով:

Բժիշկը մտաւ կառքը: Կառապանը խփեց
ձիաներին. կառքը շուտով անհետացաւ եւ
դարձեալ խորին լուռթիւնը տիրեց փողոցում:
Կինը փակեց դուները և պարտիզով վերա-
դարձաւ տուն:

Անցեալ տարի այս ժամանակ, մտածում էր
կինը, աւելի բաղդաւոր էինք. սենեակներս տաք
էր, որդիքս իրանց հօր հետ խաղում և ես
սեղան էի պատրաստում նրանց համար: Տունը
լուսաւորուած էր մոմերով և վարագուրի լե-

տեից գրուած էր Ծննդեան տօնի պապի *) բերած գեղեցիկ ընծաներով զարդարուած սեղանը: Որքան նեղացնում էին զաւակներս հօրը, իշխում էր կինը, որ նա շուտով բաց անէ այն վարագուրը և բաժանէ պապի բերած ընծաները: Բայց այժմ ոչինչ չը կայ տանը և երեխաները գուրկ են ընծաներից և քաղցրաւենիներից: Հայրը վեց ամիս է, որ հիւանդ պառկած է: Նա այլ ևս դասեր չէ կարողանում տալ. տանը փող չը կար: Տան մէջ եղած բոլոր թանգարին բաները ծախուած էին, աղախինն արձակուած և թէ տան, և թէ հիւանդի հոգսերը մնացել էին կնոջ վրայ:

Այս մտածմունքներով նա մտաւ տուն, որտեղ մութը հիւրասենեակում նստած էին երեխայքը:

— Այստեղ էք, զաւակներս, հարցըց նա:

— Այս մայրիկ, պատասխանեցին երեքը միասին:

— Այստեղ միթէ չէք մըսում:

*) Ամբովկայում պատմում են երեխաներին, որ պարգևան ու քաղցրաւենիքը բերում է Ծննդեան տօնի պապը: Նա իբր ծածուկ տնէ տուն ման է գալիս եւ իւր հետ բերած ընծաները դարսում առանձին սեղանի վերայ վարագուրի յետեւից: Իւր ժամանակին հայրը միայն կարող է յետ քաշել այդ վարագուրը եւ բաժանել ընծաները երեխաներին:

— Յուրտ է փոքր ինչ. բայց մենք երեքս միասին նստել ենք հալըիկի մեծ բազկաթոռի վրայ և կատուն նստեցրել մեր գոգում: Սա այնպէս լաւ տաքացնում է մեզ, որ կարծես թէ փոքրիկ վառարան լինի: Այդպէս նստած մնացէք մինչեւ գնամ և ձեր հօրը նալեմ, յետոյ կը դամ ձեզ մի լաւ բան կը պատմեմ:

Երևի մենք այս տարի տօնածառ չենք ունենալու, կամենում էր հարցնել փոքրիկ ժորժը, բայց քուրը չը թողեց, ասելով՝ լո՞ր, չես տեսնում, որ մայրիկը շատ նեղացած է: Հայրիկին հարկաւոր է լաւ գինի և խորոված միս, բայց մենք փող չունինք: Այժմ չի կարելի մտածել քաղցրաւենիների և պարզեների վրայ՝ որովհետև շատ թանգ են: Ժորժը ոչինչ չը պատասխանեց քըրոջը և մի քանի ըոպէ մտածելուց յետոյ կը կին հարցըց: Իսկ հնդկահաւի վրայ կարելի է մտածել:

— Ոչ, ոչ, սիրելիի: Իսկ հաղալիքների վրայ, կը կին հարցըց նա յուսահատական ձայնով:

— Ոչ, չի կարելի, պատասխանեց քուրը:

— Ուրեմն մեր Ծննդեան պապը ամենեւին փող չունի, խօսեց ինքն իրան երեխան:

— Ոչ, նա փող շատ ունի, բայց միայն իւն-

Էօք Երեխանց Համար: Ժորժը այսօր իրան
խելօքաչէ պահում, պատասխանեց Կարրին: ԱԱԱ.ԱԱ անգամ Ժորժը ըոլոբովին լռեց և մի
քանի վայրկեան սենեակումը կատուի մոմոա-
լուց աւելի ոչինչ չէր լսվում: Ժորժը դեռ
չէր լուսահատվում, այլ յուսով էր, որ պար-
գևները կարող են դալ: Ամաս ցյօք զմէ

— Դու նրան տեսել ես արդեօք, կամաց Հարց-
րեց նա իւր մեծ եղբար Վիլիին: Ամի՞

— Ումը:

— Ծննդեան տօնի պապին: Անցեալ տարի
ես ծապասում էի նրան, բայց քունս տարաւ
և երբ որ գարթեցալ, տեսալ որ ինձ Համար
մի գեղեցիկ խաղալիք էր ըերել ու դրել, ան-
կողնիս վրայ. բայց խաղալիքս արդէն կատր-
ուած է այժմ:

— Դու այնպիսի ջատախօսն ես, որ բան
Հարցնելիս չես սպասում պատասխանին. լսիր,
ահա պատմեմ քեզ, ան նրան տեսել եմ, բայց
ոչ կենդանի, այլ պատկերը:

— Ի՞նչ տեսակ է, հետաքըքը թեամբ Հարց-
րեց Ժորժը:

— Նա շատ ծեր է, այնպէս Հարիւր տարեկա-
նից աւելի կը լինի, սպիտակ երկայն մօրուքով:

— Ինչպէս մեր աղբէ մշակո՞ Դիկը. ես շատ
սիրում եմ նրան, ասաց Ժորժը:

— Սիրելիս, դու անդադար խանգարում են
ինձ. չես թողնում որ վերջացնեմ:

— Բայց, յետո՞յ, շարունակի՞ր:

— Այն, որ պապը քո Դիկի նման չէ: մզաւ
— Ում նման է:

— Վիլիին մտածմունքի մէջ ընկաւ:

— Գիտես Ժորժ, նա ոչ ոքի նման չէ. նա
ձիւնով ծածկած երկար վերարկու ունի, նրա

մոխրագոյն և բարի աչքերը ուրախ ժպիտով
կարծես ասում են «զաւակներս նայեցէք ին-

չեր եմ ըերել ձեզ Համար. շնորհակալ կը մնաք»:

— Յետո՞յ, յետո՞յ, անհամբերութեամբ Հարց-
րեց Ժորժը:

— Շատ բաներ ունի նա վերարկուի տակը,
զանազան խաղալիքներ, տիկիններ և շաքարե-
ղեններ:

— Նա փալտեալ ձի ևս ունի:

— Ալո՞, ունի:

— Թրեր էլ:

— Թուր էլ ունի, հրացաններ էլ... մէկ խօս-
քով ամեն բան:

— Ժորժը սկսեց մտածել: Ծննդեան տօնի
պապը նորա երևակայութեան մէջ կենդանի

պատկեր ստացաւ. և այնպէս յափշտակուեց
նրանով, որ հնդկահաւն էլ մոռացաւ և բոլորը:
Երբ ժամացոյցը խփեց 8, մայրը դեռ չէր

Երեսում: Մեծ քոյր Կարրին ծորժի երեսը
լուաց, շորերը հանեց և քնեցրեց: ծորժը
քրոջը չընդդիմացաւ, այլ իսկոյն խօսքը կա-
տարեց և քնեց, պապի վրայ մտածելով: Նատ
երազներ տեսաւ նա այն գիշեր: Նրանից յե-
տող պառկեց Վիլին: Բայց նա երկար ժամա-
նակ չը կարողացաւ հանգստանալ, այլ մտա-
ծում էր, թէ «ինչո՞ւ պապը մեզ մոռացաւ.
ամենքի տանը տօն է և ուրախութիւն, բայց,
մեզ համար ոչինչ. գոնեա պապը եթէ մեզ
համար ոչինչ չը քերեց, հայրիկի համար լաւ
գինի բերեր և խորոշած միս. բժիշկն ասաց
որ առանց գինու և մսի հայրիկը ուշ կը լա-
ւանայ:

2.

Միւս առաւօտ, լուսադէմին, Վիլին վեր-
կացաւ, հագնուեց: Նա գիտէր, որ այդ ժամա-
նակ կաթը ծախող կանալք անցուդարձ են
անում: Իջաւ ներքին յարկը, հիւրասենեակի
միջով անցաւ դէպի պարտէզը, սպասելու
պարտիզի գրան մօտ իւր ծանօթ կաթ ծա-
խող կնոջ: Նա չը սխալուեց և շատ ժամա-
նակ չ'անցաւ, որ նոցա ծանօթ կաթ ծախող
Լուիզան երեաց:

Վիլի, դու ես, ասաց Լուիզան, հայրիկի
ինչպէս է:

— Նորհակալ եմ, Լուիզա: Նա գեռ քնած
է, և մայրիկն էլ: Խեղճ մայրիկս շատ է չար-
չարվում. բոլոր տան հոգաը նա է քաշում.
ոչ ես և ոչ իմ քոյրը չենք կարողանում օդ-
նել նրան:

— Այն, ուղիղ ես ասում: Բայց ինչ կամէր
նա քեզ, եթէ տեսնէր այստեղ առանց տաք
հագուստի:

— Նա չը գիտէ, որ ես այստեղ եմ և չը պէտք
է նա այդ իմանալ: Ես ձեզ էի սպասում. մի
խնդիր ունիմ ձեզ մօտ: Եթէ կարող էք, այս
նամակը փոստը տարէք. շատ հարկաւոր նա-
մակ է:

— Նատ լաւ սիրելիս, միայն մէկ պայմանով,
որ մէկ բաժակ կաթը, որ այժմ կը տամ քեզ,
իսկոյն խմես: Լուիզան շուտով հանեց թի-
թեղեալ ամանը, ածեց մէջը կաթը և տուեց
Վիլիին: Վիլին կարմրեց. մի ինչ որ ուզում
էր ասել, բայց չէր համարձակվում և ամանը
նորա ձեռքից առնելով, համարձակ ասաց՝

— Լուիզա, թոյլ տուէք ինձ այդ կաթը տա-
նելու ժողժին, իբրև ծննդեան տօնի ընծալ:
Նա կաթը շատ է սիրում:

— Դու խմիր, խմիր, իսկ նոցա համար էլ

Ես ուրիշ կը տամ, խօսքը կտըեց Լուիզան:
Դու մըսել ես, պէտք է տաքանաս: Այս մեծ
ամանով կաթը տաղ ձեր տուն: բաւական է
ժորժին էլ, Կարլին և հօրդ ու մօրդ
էլ. միայն զգուշացիր ճանապարհին չը վայր
դցես և չը թափես կաթը: Իսկ նամակիդէ հա-
մար անհոգ կացիր, կը հասցնեմ տեղը:

Յ.

Երկու ժամից յետոյ այս փոքրիկ տանը ար-
դէն պատրաստուած էր խոհանոցում թէյն
սեղանի վրայ: Թէյամանը դրուած էր հացի
կտորների և եփած գետնախնձորի մէջ: Կար-
լին այս բոլորը կարգի գցեց, սեղանի շուրջը
աթոռներ դարսեց և նշան տուեց երեխաների
հաւաքուելու համար: Այդ միջոցին երեխա-
ները սովորաբար խաղում էին պարտիզումը:
Կանչելու ձայնի վրայ ներս մտաւ խոհանոցը
միայն ժորժը առանց Վիլիի: Նա չը գիտէր,
թէ ուր է իւր մեծ եղբայրը: Ժորժը մի ինչ
որ սկսեց պատմել Կարլիին, բայց նա չէր լսում,
այլ մտածում էր Վիլիի ուշանալու մասին: —
Ուր կը լինի նա, մտածում էր աղջիկը: Մայրը
շուտով կը գայ և կը նեղանալ, որ նա այստեղ
չէ: Նա երեք առանց հարցնելու չէ հեռա-

ցել, իսկ այժմ յանկարծ անհետացել է: Բայց
Վիլին շուտով վերադարձաւ: Նորա քիթը
կարմրել էր, ձեռքերը կապտել և աչքերից
ցրտիցը արտասուք էր գնում: — Ես պարտիզի
դրան մօտ էի, պատասխանեց Վիլին Կարլիի
հարցմունքին, ես նայում էի փողոցին:

Թէյ խմելիս Վիլին լուր էր մնացել: Նա
շատ սակաւ էր ուսում, անդադար պտուտ
գալիս աթոռի վրայ և փողոցից եկած ամեն
մի ձայնը փոխում էր նորա երեսի գոյնը:

Թէյից յետոյ ժորժը խնդրեց Վիլիին, որ
իրան տանէ հետը պարտիզի դրան մօտ: —
Երկեի այնտեղ լաւ է, որ դու այնքան ժամա-
նակ այնտեղ մնացիր, անց ու դարձ անողնե-
րին նայելով: Վիլին չէր համաձայնում, բայց
զիջանելով նորա աղերսանքին, վեր առաւ,
տարաւ: — Լաւ է, գնանք, երբ որ մայրիկը
գնայ վերև հայրիկի մօտ, ասաց նա նրան:
Բայց հայրը այն առաւօտ ուշ զարթեցաւ և
մայրիկը երկար մնաց ներքին յարկումը: Վիլ-
լիի համբերութիւնը հատնում էր նա անդա-
դար մօտենում էր պատուհանին, վարագուըը
յետ քաշում և նայում դէպի փողոցը: Ժորժն էլ
փոքր կապիկի պէս մի եւ նոյնն էր կրկնում,
չը հասկանալով եղբօր անհանգստութեան
պատճառը: Ահա վերջապէս հայրը զարթեցաւ,

և նորա զանգի ձայնը լսելով, մայրը իսկոյն վերև վազեց: Իսկ ժորժը և Վիլին, որ անհամբերութեամբ սպասում էին այդ ըոպէին, դուրս թռան: Նոքա գնացին պարտիզի դրան մօտ նստոտեցան: Վիլին նայում էր հեռու և կարծես մէկին սպասում էր: Ժորժն էլ նայում էր նոյն կողմը. բայց ոչինչ բան չը կար: Փողոցը ձիւնով ծածկուած էր և ոչ ոք չէր երեսում: Յանկարծ մի աղմուկ բարձրացաւ: Վիլին ականջները սրեց, բայց նորից իւր տեղը նստեց, տեսնելով, որ աղմուկ բարձրացնողները մի խումբ երեխաներ էին, որոնք գնում էին սառուցի վրայ խաղալու: Ժորժը սկսում էր մրսիլ: Նա կարծում էր դուրսը հետաքրքիր բաներ տեսնելու, բայց սխալուեցաւ: Ահա փողոցներ մաքրող Դիկը երևաց իւր սալլակով: Նա ամեն տեղ մաքրում էր ձիւնը, սալլակումն ածում և այդպէս առաջ գնում: Դիկին տեսնելով, ժորժը ծննդեան պապին մտաքերեց և աւելի տիրեց:

Յանկարծ Կարրին կանչեց նրանց «Վիլի, ժորժ, եկէք, մայրիկը կանչումէ ձեզ»: Ժորժը ուրախացաւ, թռաւ իւր տեղից, բայց գարմանալով նայեց Վիլիի անքառականութեան վրայ:

— Վնաս չունի, ասաց Վիլին. Թէպէտ այժմ չերեաց նա, բայց այսօր անպատճառ կը գայ: — Ո՞վ կը գայ, Վիլի:

— Նա, Ծննդեան պապը:

— Պապը. բայց դու ի՞նչ գիտես, հարցըեց նա:

— Ես գիտեմ. այդ խորհուրդն է դեռ և գաղտնիք. տես ոչոքին չասես:

4.

Դարձեալ մթնեց, բայց ոչինչ փոփոխութիւն չը կայ այն փոքրիկ տանը. դարձեալ հիւրասենեակը մութն է: Վիլին մի և նոյն անհանգտառութեամբ, բայց աւելի ստէպ ստէպ մօտենում է պատուհանին, աւելի երկար մնալով այնտեղ. աչքը չէ կամենում հեռացնել փողոցից:

Աստուած իմ, այս ի՞նչ աղմուկ է փողոցում: Զիաների ոտքի ձախն այս ժամանակ և ալսպիսի խուլ փողոցում: Զայնը աւելի և աւելի մօտենում է և վերջապէս կանգնումէ տան առաջ մի կառք:

— Ել, պարոններ, այստեղ է արդեօք բնակվում Փիլիպոս Գարրիսը, գոչում էր մէկը:

Վիլին խելագարի պէս դուրս թռաւ փողոցը:
Նա պարզապէս իմացաւ, որ իւր հօրն էին
Հարցնում:

— Այս նա է, ձայն տուեց նա կարրին:
Ես գիտէի, որ պիտի գար այսօր: Բայց թէ ով
էր, կարրին չէր հասկանում և զարմանալով
նայելով Վիլին՝ գնաց նորա յետեից:

Նա մի առողջակազմ տղամարդ էր, անմօ-
լուք, շէկ բակենբարդներով, տաք հագնուած,
ձայնը կոշտ:

— Դէհ, Տօմ, շուտով իջեր այդ տեղից,
ասաց նա հետը կառքում նստած 12 տարե-
կան երեխային:

Այս երեխան, որ երևի թէ ծննդեան տօնի
պապի որդին էր, հագած ունէր երկար շորեր:
Վիլին չէր կարծում, թէ պապը որդի ունէր,
եսկ ծորժը զարմացած էր, տեսնելով պապին
ոչ երկար ու ձիւնապատ հագուստով: Բայց
երեխաները շուտով հանդարտուեցան: Ի՞նչ
վնաս, որ նա անմօրուք է և առանց ձնոտ
վերաբերի: Նա Տօմի հետ հանում էր կառ-
քից անհամար կապոցներ և կողովներ: Վիլ-
ին կարծում էր, թէ երազումն է և ճմուռ
էր իւր աչքերը: Աչքերը մէկ էլ որ բաց արեց
պապին լաւ նայելու, — այլ ևս նա այնտեղ
չէր: Բոլորը անհետացաւ՝ կառքն էլ, պապն

էլ, և երեխան էլ: Առաջներին դարսած էին
անհամար կողովներ, և կապոցներ: Ո՛չ, այս
երազ չէր: Տեսան այնտեղ՝ և խորոված միս,
և գինով լիքը շիշեր, և հնդկահաւ, և քաղ-
ցրաւէնիք: — Ո՛հ, Կարրի, բացագանչեց Վիլին,
տես ինչպէս բարի է նա: Ոչինչ չէ մոռացել:

Մինչև անգամ խաղալիք էլ կայ Փօրժի համար:
Այս բոլորը շուտով վազեցրին երեխաները
գէպի հօր սենեակը, որ նա էլ տեսնէ ծննդեան
պապի բերածները: Փարրիսը գուարճանալով
նայում էր ինդացող երեխաներին, որոնք
շուտ շուտ ցոյց էին տալիս բոլոր ընծաները:
Վիլին մանաւանդ բաղդաւոր էր համարում
իրան, որ նորա գաղտնիքը չիմացուեցաւ: Բայց
ահա հօր ձեռքը մի փողով լիքը նամակ ընկաւ
հետեւեալ հասցէով: «Պատասխան Վիլինա-
մակին ծննդեան պապից»:

Դաղտնիքը բացուեց: պէտք էլ բոլորը պատ-
մել: Ամենքը լուեցին՝ լսելու Վիլին պատ-
մութիւնը: Եղանակ զարդարութիւնը միա-
— երեկ, սկսեց նա կարմրելով, երբ մալրի-
կին տեսալ արտասուած, հայրիկի համար գինի
և խորոված միս առնելու փող ըունենալու
պատճառով, ես վճռեցի պատճառակը Երանու-
նա մտածեցի, թէ նա ոի գումար մոռացնեա-
մեր հասցէն և նամակով ցոյց տպագիւնա-

կութեան տեղը, խնդրեցի, խաղալիքների փոխանակ, այս տարի հալրիկին համար գինի և միս ուղարկէ: Յետոյ պատմեց, թէ որքան չարշարուեց նամակ շարադրելու վրայ, որ պարզ և մաքուր լինի, հետ կարդալու ծերունի պասկի համար: Վերջն աւելացրեց, որ նամակը նա տուեց Լուիզային, փոստը լայնձնելու համար: — Ուրեմն դորա համարէր, սիրելիս, որ դու այնպէս անհանգիստ էր ամբողջ երեկոյ: Դու երեկի կասկածում էիր, թէ կը կատարէ արդեօք պապը քո խնդիրը: Բայց որովհետեւ երեկոյ ամբողջ օր աղօթք էի անում: Այս դու մայդ Բայց որովհետեւ բաւականին ուշ էր և հայրն էլ հոգնած, այդ պատճառով մայրը ուղարկեց երեխաներին քնելու, ասելով «գնացէք զաւակներս, աղօթք արէք այն բարի մարդու համար, որ մեզ ախօր ուրախացրեց»: Միայն կարրին նկատեց, որ մայրը չէ հաւատում Վիլիի արած պատմութեանը: Կարրին հասկացաւ, որ գաղտնիքը դեռ բոլորը չէ բացուել, թէ մայրը կարծում է, որ այս բաղդաւորութիւնը բերել է ոչ թէ պապը, այլ մի բարի մարդ: Վիլին ու Փօրմը չէին մտածում ոչ բայց ուղարկեց նամակը և ամսագիրը դաստիարակութեանը առաջանաւ առաջանաւ:

ինչ. շուտով աքնեցան, Երազումը տեսնելով երկար վերարկուով պապին: Ի՞նչ այլայ ըմպելյա՞մ միաժյամ զշ և անշաման գրութեան ըստ բայթմբաջմի ցարդյան 5. մաժայշախառայ ամ

Մայրը գաղտնիքը պարզելու համար գիմեց կաթ ծախող Լուիզային. և ահա նորու պատմածը: Երեկ գործերս վերջացնելուց յետոյ, ես Վիլիի խնդիրը կատարեցի, հասցնելով նամակը փոստը: Բայց նամակ ընդունող փոստայի կառավարչուհին նամակի հասցէն կարդարուց յետոյ, ժպտաց և հարցրեց ինձ՝ «Ով տուեց ձեզ այս նամակը և գիտէք, թէ ուր պէտք է ուղղուի»:

— Ոչ, պատասխանեցի, ես կարդալ չը գիտեմ և ժամանակ էլ չունէի հարցնելու Վիլիին այդ բանը:

— Ներեցէք ինձ, ասաց նա մի պարոնի, որ այնտեղ կանգնած էր, սպասելով ծրարը, երկի, ստանալու, այս տեսակ հասցէով նամակ ինձ չէ պատահել. ինչ խորհուրդ կը տաք:

Պարոնը վերցրեց նամակը և հասցէն կարդալս նա էլ ժպտաց:

— Նամակը կնքած չէ, ուրեմն կարելի է կարդալ, սպասելով, սկսեց կարդալ: Բայց նա ալլ

ևս չէր ժպտում կարդացած ժամանակը, այլ
լալիս էր:

—Դուք ճանաչում էք Գարբիսին, հարցրեց
նա կառավարչուհուն, կարդալը վերջացնելուց
լետոյ:

Նա ասաց, որ ճանաչում է և պատմեց
ձեր առաջուան լաւ կեանքը և թէ այժմ
ամուսնուդ հիւանդութեան պատճառով նե-
ղութեան մէջ էք: Նա շատ գովեց ձեզ էլ, և
գաւակներիդ էլ:

Այս պարոնը այս բոլորը ուշադրութենով
լսեց և լետոյ յանձն առաւ նամակը տեղը
հասցնելու:

—Այն, տիկին, ձեր Վիլլին շատ խելօք երե-
խայ է, ասաց Լուիզան: Զը գիտեմ ինչ էր
նամակումը զրած, բայց մեծ տպաւորութիւն
թողեց պարոնի վերայ:

—Վիլլին խելօք երեխայ է, ասաց տիկինը,
բայց աւելի բարի: Խնդրեմ ասէք, թէ ով էր այն
պարոնը:

Լուիզան ճանաչում էր: այդ երելի հա-
րուստ նիւսօնն էր: այդ երելի հա-
մարդ մշտական անդամ ըստուն դժուար:

6.

Փիլիպոս Գարբիսը շուտով առողջացաւ և
նորից սկսեց դաստավութիւնը: Նորա հին

աշակերտներին աւելացան և նիւսօնի որդիքը:
Ոչ նիւսօնը և ոչ Գարբիսը արդէն չէին լի-
շում Ծննդեան տօնի պապի արարմունքը:
Բայց Գարբիսը ոչ մի տեղ այնպէս սիրով չէր
պարապում երեխաների հետ, ինչպէս նիւսօնի
տանը: Նա ցանկանում էր մի բանով երախտիքը
վճարելու: Նոքա շատ բարեկամացան և Գարբիսը
միշտ ասում էր նիւսօնի մասին, թէ նա ինձ
համար թանգ է, առաջին՝ բարեգործութեան
համար, ինձ օգնելով և երկրորդ որ նա ինձ
միջոց տուեց նորա բարութեան փոխարէնը
հատուցանելու և հաւատացէք ինձ, որ բարե-
բարութեան ընդունելը շատ ծանը է, երբ որ
զգում է մարդ, որ փոխարէնը չի կարող վճա-
րել գործով: Անգօրութեան զգացմունքը մար-
դուս նուաստացնում է:

Այս ըստ զցիցից ըստ Յ օ՛՛ Ա ըցիմւ դիման զատիս
ըստով Խոյցու մի մասը մասնաւուն այս
ու միտու օ՛՛ Ա ըստու գնցու դու ողցիմիլաշ

այս ըստ ծովոր ծովոր և զմաստիւ ծմ՛Ս
և այժմը ըստ առ մաս բացմի միմանալ
քոն չոյ և այսուոց վեժզայտան այ
ու Յ գմաստիւ մազքու լոյմի մասոց ին
դունած այս Յ բանի առ մածնաւու նուի
այս առ գըցարմանից մատիւան մը

շցմբյան հմույթի և մաքսիմա միջնադարական
ոչ մեծ մէրրա ցածրաց չո և ցօսոյթ չի
ոցաւուսալու հրապար հօօմ ամառամբ և նաև
ոչ խոցի սժաման յօմ չի չո ցածրաց ըլամ
հմույթ սժրանի տաճ գրամատից և արարական
ոցաւուսալու խուաց չի ոչ նորութեաց ամս ցման
ցածրաց և մատուցման առաջ ոչ արարամի
և ոչ ամս ոչ արարամ ցմույթ ոչ եւսու ոչին
մատիւթեամբ ամս ոչ ամս ոչ ամս
և ոչ ամս ոչ արարամի և խուաց ոչին ոչ ամս
ցածրաց մատ մարզաց այսու ովառ ովառ
ու Ֆինլեանդիայի բնութիւնը շատ տիսուր պատ-
կեր է ներկայացնում: Նորա մերկ ապառաժ-
ները, անթիւ լճերը և երկարատև ցուրտ ձմե-
ռը բնակիչներին շատ նեղութիւններ են պատ-
ուր բնակիչներին շատ նեղութիւններ են պատ-
ճառում: Այդ պատճառով աշխարհիս ամենա-
տիսուր անկիւններից մէկն է այդ երկիրը: Բայց
սորա բնակիչներն այնքան են սիրում իրանց
հայրենիքը, որ երբէք նորան չեն փոխի ու-
րիշ աւելի երջանիկ երկրի հետ:

Մեծ աշխատանք է գործ դրած այդ ապա-
ռաժների վերայ տուն ու տեղ սարգելու և
լաւ ճանապարհներ բանալու. և երբ մարդ
մէկ բանի վերայ ալդքան աշխատանք է թա-
փում, այնուհետև շատ թանգ է՝ նորա համար
այն առարկան: Ֆինլեանդացիք շատ աշխա-

տասէր ժողովուրդ են և միմեանցն հետ շատ
ազնվութեամբ և սիրով են վարվում: Հարուստ
մարդիկ օգնում են փողով, գիտնականները՝
իրանց խորհուրդներով, որպէս զիձեռք ձեռքի
տուած ժողովրդեան կեանքը բարելաւացնեն
և միջոց տան մարդկանց աղքատ բնութենից
աւելի օգուտ քաղելու:

Պայտեղ մինչև անգամ երեխայք իրանց կա-
րողութեան ցափ աշխատում են հասարակա-
կան օգտի համար մի բան գործելու:

Եատ բարեսիրտ է այս ազնիւ, բայց ըստ երեւ-
ութին տիսուր ժողովուրդը: Ահա, որինակի
համար, կը պատճենք այստեղ Մալիսեան տօն
կամ գաշնադրութիւն կոչուած բանը, որ հիմ-
նուել է 1870 թուի մայիսի 1-ին Ֆինլեան-
դիայի Հելսինգֆորս գլխաւոր քաղաքում:

Պայտ գաշնադրութեան նպատակն է անա-
սունների պաշտպանները և Ֆինլեանդացին երե-
խաների սէրը գէպի թոյլ արարածները այն
աստիճան զարգացաւ, որ 1875 թուի Մալիսի
1-ին մասնակցեցին այդ գաշնադրութեանը մօտ
20000 երեխայք: Այս գաշնադրութիւնը Մալի-
սեան է կոչվում, ոչ նորա համար միայն, որ
Մալիս ամսին է կազմուած, այլ և որովհետև
ամեն տարի գարնան սկզբումն է կատարում
մի առանձին տօնախմբութիւն, որ Մալիս:

պօն է կոչվում: Ալդ տօնի նպատակն է լիշեց-
նել երեխանցը, թէ ինչու համար է կազմուած
դաշնագրութիւնը և ինչ է ամեն անդամակ-
ցողի պարտաւորութիւնը և ավլն: Եւ այդ տօ-
նին այնպէս ուրախ ժամանակ են անցկաց-
նում երեխալք, որ շատ սակաւ է պատահում
մի ուրիշ անդամ:

Գարունը այդ երկրի բնակիչների համար
մեծ նշանակութիւն ունի: Երկարատես խիստ
ձմերուան անցնելուց յետոյ, Մայիսին, կար-
ծես, բնութիւնը և մարդիկ միասին սթափում
են ձմերալին քնից՝ աւելի ուրախ և զուար-
ճութեամբ անցնելու կարճատես ամառը: Ու-
րիշ երկիրներում ամենաքաղցր ժամանակը
գարունն և աշունն է համարվում: Ամառը
շոգ է, իսկ ձմեռը ցուրտ: Գարունը ուրա-
խալի է թւում մարդուս, որովհետեւ օրէցօր
ազատումէ նորան ձմերալին ծանը կապանք-
ներից և ոչ յանկարծակի, այլ հետզհետէ բե-
րելով ուրախութիւններ, որպէս զի մարդ կա-
րողանալ երկար զուարճանալ ամեն մէկով:
Աշունը ևս ունի իւր գեղեցկութիւնը: Նոգը
մեղմանում է և օդը այնպէս զովանում, որ
մարդ, ամարալին տօթերից ազատուելով,
զուարթանում է:

Ֆինլեանդիայում համարեա թէ չէ լինում
գարուն և աշուն: Ամառը արագութեամբ
հետեւում է ձմեռին և մի քանի օր առաջ
ձիւնով և սառուցով ծածկուած տեղերը զար-
դարվում են կանաչ խոտով և ծառերով: Փոքը
ինչ առաջ ամեն տեղ թագաւորում էր մե-
ռելալին լոռութիւն, իսկ այժմ անտառի մի-
ջից գալիս են թռչունների ուրախ ձայները.
Երեսում են սարեկներ և գարնան միւս հիւ-
րերը: Եւ ոչ մի տեղ այնպէս ուրախ չեն ըն-
դունում այդ փոքրիկ թռչուններին, ինչպէս
ֆինլեանդիայում, որովհետեւ դոքա իրանց եր-
գերով և շարժմունքներով կենդանացնում են
այս ամայի երկիրը և մոռացնել են տալիս
անտառնելի ձմեռը, որ մարդկանց այնքան նե-
ղութիւն ու զրկանք է պատճառել:

Եւ այդ պատճառով այս բոլոր երեխանց սի-
րելի թռչնիկները պաշտպանութիւն են գտել
նոյն իսկ նոցա կողմից: Թռչունները համար-
եա թէ ոյժ չունեն իրանց բազմաթիւ թշնա-
միների հետ պատերազմելու. այն ինչ նոքա
այնքան զուարճութիւն և օգուտներ են բե-
րում մարդկանց, որ վաղուց հարկաւոր էր
նոցա պաշտպան հանդիսանալ: Ալդ իսկ պար-
տականութիւնն են յանձն առել ֆինլեան-
դացի երեխալքը, Մայիսեան Դաշնագրութիւնը

կազմելով։ Այդ դաշնադրութեան մասնակցող
երեխայք պէտք է ստորագրեն հետևեալ կա-
նոնները՝ զանգ ու ա միամիա չ նուանմա-
«Մենք, ներքոյ ստորագրեալներս խոստա-
նում ենք և մեր ստորագրութեամբ պարտաւոր-
վում բարեխղճութեամբ կատարելու և երբէք
չը մոռանալու հետևեալ կանոնները՝
1) Խոստանում ենք ոչ մի անասունի հետ
վատ չը վարուել և ի գուր չը չարչարել նոցա։
2) Ագուափց և կաչաղակից փոքր թուչուն-
ների և նոցա ձագերի համար հոգալ և պաշտ-
պանել նոցա։
3) Զը քանդել նոցա բուները, ձեռք չը տալ
ձուաներին և ոչ մի կերպով չը նեղացնել նոցա։
4) Զը սպանել և չը վիրաւորել նոցա ոչ
քարով, ոչ հրացանով և ոչ նետով։
5) Զը բռնել և չը փակել վանդակի մէջ ոչ
մի թուչուն, բացի դեղձանմիկը, որ այստեղ
փակուած տեղ ծնուելով, չէ զգում ազատու-
թեան կարերութիւնը և մեր կլիմայում վան-
դակի մէջ միայն կարող է ապրել։
6) Բունուած թուչուններին ազատութիւն
տալ, եթէ միայն այդ մեզանից լինի կախուած։
7) Մենք խոստանում ենք համոզելու և
ուրիշներին՝ թուլ արարածների հետ անգութ-
չը վարուելու և այդ բանի համար չը խնայել

մեր ջանքը, որովհետեւ սէրը և համբերու-
թիւնը միայն կարող են զսպել քարասիրա-
մարդուն էլ։ ամբ սօս զօսք ա զուց ուն զնամնին
Այս բոլորը մենք խոստանում ենք դէպի
Աստուած և նորա ստեղծած արարածները ու-
նեցած սիրու համար և ի նշան շնորհակալու-
թեան այն բոլոր ուրախութիւնների համար,
որ նա ուզարկումէ մեզ ևս առաւել մեր հո-
գին զուարձացնող թուչունների երգերի համար։
Դաշնադրութեան իւրաքանչիւր նոր անդա-
մակցին մի տեսակ նշան են տալիս, այն է
կարմիր թղթի վերալ ծիծեռնակ նկարած։ Ա. V.
տառերով (Mai-Verein) և այդ նշանը սովորա-
բար գլխարկի վերալ են կպցնում։ Ամեն տարի
դաշնադրութեան անդամները իրանց միջից ընտ-
րում են մէկ գլխաւոր՝ թագաւոր կամ թա-
գուհի, որ մի տարուալ ընթացքումը պէտք է
խստութեամբ հսկէ իւր ընկերների վերալ և
սոքա պարտական են հնագանդուիլ նորա բո-
լոր հրամաններին։ Եթէ մէկը չը լսէ թագա-
ւորին և դաշնադրութեան մէջ մտնելիս իւր
տուած խոստումները չը կատարէ, այն ժամա-
նակ այդպիսի ուխտազանցի անունը մի առան-
ձին թերթի վերալ են գրում և արտաքսում
դաշնադրութենից, եթէ չի խոստանալ ուղ-
ղուիլ, ճիշդ պահպանելով այնուհետեւ բոլոր

իւր տուած խոստումները։ Դաշնադրութեան
հաւատարիմ և բարի անդամները պէտք է
միմեանց հետ քոյր և եղբօր պէս վարուեն, հաշտ
և խաղաղ։ Միմեանց հետ պատահելիս նոքա
երկու մատը պիտի իրանց ճակատին կպցնեն
այնպէս, ինչպէս անում են զինուորականները
իրանց մեծաւորին պատահելիս և իրանց ազ-
գանունը ստորագրելիս իրաւունք ունին աւե-
լացնել Ա. Վ. տառերը։

Ամեն տարի Հէլսինգֆորսում Մալիսի Լին
մի մի գրքոյկ է հրատարակվում և բաժան-
վում դաշնադրութեան անդամներին։ Այդ գրք-
քուկի մէջ գրվում են դաշնադրութեան վերա-
բերեալ բոլոր գործերը, թէ անդամների թիւը
ևայլն, և մէջը տպվում են պատկերազարդ
յօդուածներ կենդանիների կեանքից և ուրիշ
բաներ։ Առաջին իսկ Մալիսեան գրքուկի մէջ
տպուած էր պրոֆեսօր Տօպելիուսի յօդուածը,
որ Մալիսեան Դաշնադրութեան հիմնարկողնե-
րից մէկն էր։ Դա դաշնադրութեան հաստա-
տուած ժամանակն էլ օգնում էր նորան
ամեն կերպով։

Ահա քաղուածք այդ յօդուածից Մալիսեան
դաշնադրութեան մասին։

«Թէ ինչ է պահանջում մեր դաշնադրութիւնը,
այդ երեսում է այն խոստումներից, որ իւրա-

քանչիւր նոր անդամ տալիս է դաշնադրու-
թեանը նորան անդամ գրուելիս։ Աստուած-
սիրութիւնը և նորա դէպի մեզ ունեցած
գթութիւնը պարտաւորումէ մեզ սիրել և կա-
րեկից լինել մեզ հետ միասին ստեղծուածնե-
րին։ բայց թէ ինչո՞ւ է այս Դաշնադրութիւնը
նպատակ դրել գլխաւորապէս փոքրիկ թուզուն-
ներին պաշտպանելու։ Որովհետեւ նոքա թոյլ
են և անօդնական և միւնդոյն ժամանակ օգտա-
կար և մարդուս զուարճացնող։ Որովհետեւ
նոքա մեզ սովորացնում են սիրել ընութիւնը,
շնորհակալ լինիլ Արարչից և բարի լինիլ դէպի
բոլոր արարածները։ Եթէ մենք բարի ենք և
կարեկից դէպի մէկը, ուրեմն չենք կարող միւն
նոյն ժամանակ անգութ լինիլ դէպի միւսը։
Միւնոյն մարդը չի կարող բարի և չար լինիլ։
Ով սիրումէ արդարութիւնը և ճշմարտութիւնը,
նա երբէք չի չարչարիլ ոչ միւնդանուն։
Նատերը առաջ չարչարել են միայն կենդանի-
ներին և յետոյայիդ բանին սովորելով, և մարդ-
կանց հետ վատ են վարուել։ Մենք հաստա-
տապէտ կամենում ենք բարի լինիլ և ոչոքին
չը ցանկանալ վատութիւն զայդացն զայ-
դացն բարի լինելուն սովորելու համար մենք պէտք
էս պատերազմենք ամեն տեսակ չարութեան

Հետ; Եթէ մէկը քեզ վրաւ ծաղրէր, տեսնելով
մանր թռչուններին ցոյց տուած հոգացողու-
թեանդ և պաշտպանութեանդ համար, դու
հարցը ունորան՝ մի թէ անազնվութիւն չէ քեզ
համար անպաշտպան արարածներին վնաս տալը;
Բայց ես այսպէս եմ կարծում, որ պաշտպանել
թուլին և անզօրին՝ լաւ է իսկ անտարբեր
մնալ, երբ կարող ենք օգնել վատ է: Թուլին
նորա թշնամիներից պաշտպանելու համար
աւելի խելքու քաջութիւն է հարկաւոր, քան
թէ այդ թշնամիների կողմը բռնելու և նրանց
հետ միասին թուլերին ճնշելու: Ոչ, ձեզանից
ոչ ոք չի ցանկանալ փոքրոգի և երկոտ
կոչուիլ: Մեր որդիքը՝ թէ տղաւ և թէ աղ-
ջիկ, քաջ են և համարձակ և այդ կ'ապացու-
ցանեն նոքա՝ պաշտպանելով թուլ թռչունակ-
ներին: Նոցա չէ թուլ տուած կոտորել թէ
թուլ կենդանի արարածներին և թէ փչացնել
քնքուշ բոյսերը: Նոքա չեն չարչարիլ և չեն
սպանիլ մինչև անգամ մեր ուտելու թռչուն-
ներին: Որսի կամ ձկնորսութեան գնալու ժա-
մանակ, նոքա պէտք է լաւ լիշեն իրանց խոս-
տումների յօդուածը և իրանց որսին չը տան
աւելորդ չարչարանք: Մինչև անգամ թռչունիկ-
ներին վնասող գիշատիչ թռչունների հետ
մարտնչելիս նոքա չը պէտք է մոռանան,

թշնամու հետ անգամ խստութեամբ վարուիլ
ոչնչով չի կարելի արդարացնել: Ոչ ու ու
Ով (որդիաշնադրութենից կամնայ հեռա-
նալ, անա պէտք է ալդ նշանակէ առանձին
այդ բաննի համար կազմած մատեանումը և
գրէ իւր հեռանալու պատճառները: Ոչ ոքին
արգելուած չէ ադաշնադրութենից հեռանալը:
Բարի գործելը յօժար կամ քով պիտի լինի և
ոչ ստիպմամբ: Ոչ ոքին ստիպել չի կարելի և
եթէ դաշնադրութեան մասնակցող անդամը
լոյս չունի իւր տուած խոստմունքները կա-
տարելու, աւելի լաւ է, որ նա չը տալ այդ
խոստմունքը և գործ համար ոչոք իրաւունք
չի ունենալ նորան լանդիմանելու: Ճան ջան
Զը նայերվ, որ այսպիսի ճշգութիւն է
պահանջում, դաշնադրութենից հեռացող-
ների թիւը օրէ ցօր նուազումէ: Առաջին տա-
րուան մէջ գործս գնացին 44, երկրորդում՝ 35,
երրորդում միայն 5 հոգի: Խոկ նոր անդամների
թիւը բազմանումէ մեծ արագութեամբ: Մաշնա-
դրութիւնը գտնումէ համակրողներ և հասա-
կաւորներից և ամեն տարի Մայիսեան տօնը
ոչ թէ միայն մանկական է լինում, այլ ընդ-
հանուր ազգային տօնախմբութիւն:
Ամեն տարի Մայիսի 1 մօտենալիս, երբեմն
փոքր առաջ և երեմն փոքր ուշ, այն ժամանակ,

Երբ թուչունները գալիս են այստեղ, հաւաք-
վում են երեխալք իրանց համար գլխաւորի
ընտրելու համար: Թագաւորը (տղաների) և թա-
գուհին (աղջիկների) ընտրում են մէկ քանի ան-
դամներ, նոցա խորհրդով և մասնակցութեամբ
դաշնադրութեան գործերը քննելու համար:
Նոքա միասին դատում են դաշնադրութեան
օրինազանցներին. ընդունում են նոր անդամ-
ներ, որոցում են իրանց անելիքը հասարա-
կաց օգտի համար, վերջապէս խորհրդակցում
են տօնախմբութեան համար պատրաստուելու:

Տօնախմբութեանը մասնակցում են համա-
րեա թէ բոլոր բնակիչները: Տօնից մի քանի օր
առաջ ունեւոր մարդկի նուիրում են գումար-
ներ տօնի համար: Այդ փողերով պատրաստում
են ուտելիքներ և ըմպելիքներ և կազմում
այլ և այլ գուարճութիւններ: Տօնախմբութեան
հրապարակի վերայ շինում են փոքրիկ խա-
նութիւններ, մարմնամարզութեան մեքենաներ:
Երաժշտական խումբը այդ օրը սովորաբար
ձրի է ածում: Մեծը և փոքրը, աղքատը և
հարուստը, բոլորը միատեսակ մասնակցում են
մանկական այդ խնճուքին:

Նշանակած օրը և ժամին բոլոր երեխալք
ամեն մէկը իրանց լատկացրած զանազան
նշաններով, այն է դաշնադրութեան անդամ-

ները՝ այլ և թագաւորն ու միւսները՝ այլ
նշաններով հաւաքվում են մէկ տեղ և կարգով
գնում տօնախմբութեան համար նշանակած
հրապարակը, անտառում կամ դաշտում: Երե-
խանց յետեից գնում են դաշնադրութեան
հասակաւոր անդամները, վարժապետները,
վարժուհիները և միւսները:

Այս տեղ առաջ աղօթում են երգելով և
յետոյ հասակաւորներից մէկը կանգնում է մի
բարձր տեղ և կարճառօտ ճառ է կարգում
դաշնադրութեալ գործերին վերաբերեալ: Յե-
տոյ սկսվում է խնճոյքը: Մի քանի երեխալք
ընտրվում են կարգ և կանոն պահպանելու
մեծերի օգնութեամբ: Մինչև երեկոյ պարում
են, երգում և խաղում: Երեխալք վազելով
բռնում են միմեանց, բարձրանում են այնտեղ
շինուած ձողերի վերայ, հրացաններ են ար-
ձակում նշան դրուած տեղը: Աւելի լաջողակ-
ները ընծաներ են ստանում, իսկ միւսները
իրանց քաջութեան և ճարպիկութեան համար՝
գովեստներ: Մայիսեան դաշնադրութիւնը ցան-
կանում է, որ նորա անդամները քաջ և ուժեղ
երեխալք լինին, որովհետեւ եթէ մարդս ոյժ
չունի իրան պաշտպանելու, ինչպէս կարող
է նա պաշտպանել ուրիշին: Ընծաներ տալիս
են դաշնադրութեան նուիրուած զանազան

իրեղէններից։ Մի առանձին կազմած խորհուրդը որոշում է թէ ուժը պէտք է տալ ընծաներ, մարմնամազութեան մէջ աւելի ճարսլիկներին։ Յաղթանակ ստացողների անունները լայտնում են բարձր տեղից, նուագարանների ներդաշնակութեամբ։

Տօնախմբութեան վերջին, բոլոր գիւղերից նոր անդամների ցուցակներ են ուղարկում Հէլսինգֆորս, Մայիսեան գրքուկի մէջ տպելու համար։ Այդ նորա համար են անում, որ ամենքն իմանան թէ որքան անդամ կայ և որտեղ են բնակվում նոքա, որ հարկաւոր եղած ժամանակը կարողանան միմեանց գտնել և միասին կարգադրեն աւելի դժուար գործերը։

Այնուհետեւ լոյս է տեսնում Մայիսեան գրքոյկը, պարունակելով իւր մէջ անդամների ցուցակը, տօնախմբութեան նկարագրութիւնը, յօդուածներ, ոտանաւորներ և պատկերներ։ Բոլոր յօդուածների առարկան է՝ կենդանիքը, բնութիւնը և այլն։




1182
1183
1184
1185
1186

ՀՀ Ազգային գրադարան



NL0005583

ՀՀ Ազգային գրադարան



NL0005584

ՀՀ Ազգային գրադարան



NL0005585

ՀՀ Ազգային գրադարան



NL0005586

ՀՀ Ազգային գրադարան



NL0005587

2013

